



AL SOCIETY OF MALATIA
(Incorporated 1917)

CENTRAL EXECUTIVE COMMITTEE

P. O. Box 1705 Sta. D
Cleveland, Ohio

ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

(Հիմնուած 1904-ին)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻԻ 1

ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱՃԻԿՆԵՐՈՒՆ

Սիրելի Հայրենակիցներ,

Պատմական եւ անմոռաց թուական մը պիտի մնայ Կրթասիրացի 31-րդ Պատգմ. Ժողովը որ տեղի ունեցաւ Փրաժիտէնսի մէջ Սեպտ. 1, 1934 եւ որ տեւեց 3 օր: Իրապէս սոյն համագումարը եղակի էր այն հանդամանքով որ պատգամաւորներ գիտակից իրենց կոչումին ու պարտականութեան՝ արժեցուցին իրենց վրայ դրուած վստահութիւնը: Եղբայրներ եւ հայրենակցական անկեղծ սիրով տողորուած, հպարտ ու երջանիկ, խաղաղ միջավայրի մէջ ներդաշնակ կերպով, բոլոր պատգամաւորներ համախմբուած էին հայրենասիրական նուիրական նպատակի մը շուրջ, եւ հետեւելով Կրթասիրացի ընդգրկած ճշմարիտ ուղիին, հեռու անհատական եւ հատուածական ամէն նկատումներէ քըննեցին Ընկերութեան միամեայ բեղմնաւոր գործունէութիւնը ու գործնական քայլեր առին խիստ կարեւոր հարցերու ու ձեռնարկներու նկատմամբ յառաջիկայ տարուան շրջանին դանոնք գործադրութեան գնելու: Սոյն կենսական խնդիրներու մասին մեր մասնաճիւղերը պիտի ծանօթանան երբ մօտ ատենէն ստանան Պատգմ. Ժողովի արձանագրութիւնը:

Նոր Մալաթիոյ իրականութիւնը ու հոն տեղի ունեցած արդիւնքները նոր յոյս մը, աւելի մեծ եռանդ մը ստեղծեցին պատգամաւորներու սրտերուն մէջ, ու այդ հայրենասնուէր ներշնչումի տպաւորութեան տակ բոլոր պատգամաւորներ, պահ մը մոռցած իրենց առօրեայ հոգերը, ձեռք ձեռքի տուած ուխտեցին ամէն գնով զօրավիզ կանգնել Հայաստանի վերադարձումին, պահակ կենալ մեր ցեղային աւանդութիւններուն, վերաշինել Նոր Մալաթիան օժտելով զայն արդիական բոլոր բարեմասնութիւններով ու առաւելութիւններով, զարկ տալ բնակարաններու շինութեան, ազատել վտարանդի թափառական մեր հայրենակիցները ու տեղաւորել զանոնք ապահով մեր հայրենի ազատ հողին վրայ Նոր Մալաթիոյ մէջ, ուր անոնք կարողանան լծուել շինարար աշխատանքի ու ապրելու խաղաղ եւ երջանիկ կեանք մը, կեանք մը որ դարերէ ի վեր մահախնայեցներու երազն էր եւ այսօր ամէն Հայու

սրտին ամենամօտիկ բաղձանքն է: Կեդրոնական վարչութիւնն քաջալերուած տեղի ունեցած իրականութենէն՝ կոչ կ'ընէ Կրթասիրացի հաւատարիմ համայն Մալաթիացիներու որ մէկզկի գնելով անհանական եւ հատուածական բոլոր անարժէք հաշիւներ ու նկատումներ, վերջ տան ներքին խռովութեանց ու թիրախացութեանց եւ հաշտարար ու անկեղծ ոգիով նուիրուել ազգահաւաքումի ու վերաշինական նուիրական գործին մէջ: Այս առթիւ պարտականութիւնն կը հասարակե շնչուն սա պարագան որ Կրթասիրացի ուղիին ու նպատակներուն հաւատացեալ բոլոր հայրենակիցներու համար Ընկերութեանս գոնեայ միշտ բաց պէտք է մնան, երբ անոնք գործնական ապացոյցը կուտան իրենց գործքերով ու կը կատարեն իրենց պարտականութիւնները ըստ կանոնադրի տրամադրութեանց: Պէտք է դադրին այլեւս անտեղի քննադատութիւններ որոնք պատճառ կը դառնան մեր ներքին խաղաղութիւնը խռովելու: Պէտք է վերջ գտնեն բոլոր բախ-բախները: Մամուլի մէջ ունէ անհատի կամ հոսանքի կողմէ գրուած ունէ գրութիւն որ պատճառ կը դառնայ կիրքեր յարուցանելու ու թիրախացութիւններ ստեղծելու, խստիւ կը դատապարտենք այդպիսի քայլեր առնող անհատներ եւ բացարձակապէս ներքին չենք գտնել անոնց այդպիսի ընթացքը: Ասոնք կը գրենք նպատակ ունենալով միմիայն Ընկերութեանս ընդհանուր շահերը եւ մեր մտքէն հեռու է մատնանիշ ընել ունէ անձ ու հոսանք, այլ կ'ուզենք մեր խօսքերը բոլորին հաւաստարարել, որ զգոյշ ըլլան իրենց խօսքերուն ու գրութիւններուն մէջ:

Նոյնպէս Կրթասիրացի շահերու տեսակէտէն խիստ կարեւոր է մասնաճիւղերու ժողովներուն մէջ զգուշանալ անհատական բնոյթ կրող հարցեր ու ոչինչ արժող հաշիւներ մէջտեղ բերել, որոնք տեղի կուտան պարապ վիճարանութիւններու ու անդամներու զգացումները զրգուելու ու այդպիսով թշնամական վերաբերմունք ցոյց տալու անդամներու միջեւ: Կրթասիրացի միմիայն կ'ըրադի Կրթասիրացի խնդիրներով: Ուրիշ ունէ խնդիր ու հաշիւ պէտք է մուտք գտնէ Ընկերութեանս մէջ: Անդամ-

062(91-99)
Մ-16

ստի պէտք է առնեն սոյն կարեւոր պարա-
րտ աշխատանքները կրթական հարցերը
հանդիման օգտակար ապէս ծառայել: Մասնաճիւ-
ղերու վարչութիւններ պարտաւոր են իրենց խաղա-
ղայն բազան ոգիով անդամներու միջեւ հաստատել
սէր ու համակրանք ու սանձել խռովարար անձերու
փոխակար քայլերը:

ՄԱՍՆԱՃՅԻՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ ԿԱԶՄԸ

31-րդ Պատգամաւորական Ժողովի կողմէ ընտ-
րուած Կեդրոնական Վարչութիւնն ստանձնելով ի-
րեն վստահուած գործը՝ լծուեցաւ իր աշխատանք-
ներուն ու դիւանը ընտրեց հետեւեալ կերպով:

- Վահան Տէր Դաւիթեան՝ Ատենապետ
- Յովհ. Թէրզի Եպիսկոպեան՝ Փոխ-Ատենապետ
- Լեւոն Թէրթաւեան՝ Ատենադպիր
- Գեորգ Ասլանեան՝ Փոխ-Ատենադպիր
- Խոսրով Ոսկերիչեան՝ Գանձապահ
- Գրիգոր Երանեան եւ Գրիգոր Տէր Գեորգեան՝
Խորհրդակներ:

**ՄԱՍՆԱՃՅԻՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՆՆԵՐՈՒ
ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ**

Պատգմ. Ժողովի որոշման համաձայն՝ բոլոր
մասնաճիւղեր պարտաւոր են կազմելու իրենց վար-
չութիւնները անմիջապէս: Արդէն շատ անդամներ
կրկնած ենք թէ անհրաժեշտ է սոյն ընտրութիւն-
ները կատարել շուտով ու գործի սկիզբ: Ամիսներ
առնելու չէ՝ սոյն կարեւոր գործը: Առ առաւել
միջեւ Հոկտեմբերի սկիզբները վերջացած ըլլալու
են Արտասահմանի եւ Ամերիկայի Մասնաճիւղերու
վարչական ընտրութիւնները, որպէս զի կարող ըլ-
լան Ընկերութեան խիստ էական ձեռնարկներուն
թիւացք տալու: Մասնաճիւղեր պատասխանատու
պիտի մնան երբ կը թերանան սոյն մեր հրահանգի
գործադրութեան մէջ:

Այս շրջանի մեր ամէնէն կարեւոր գործն է ներ-
գաղթի հարցը: Մեր թափառական հայրենակիցնե-
րը անձկանօք կ'սպասեն մեր օգնութեան որպէս զի
կարողանան դադրել Նոր Մալթիոյ: Սոյն նպա-
տակի գործադրութեան համար 31-րդ Պատգմ. Ժո-
ղովը սահմանեց 5000 տոլարի պիւտձէ մը որ զօ-
քայի սխտէմով իւրաքանչիւր մասնաճիւղի վրայ
հանուեցաւ որոշ գումար մը: Կեդր. Վարչութիւնը
ի մտի ունենալով սոյն քէմբէյի յաջողութեան ան-
հրաժեշտ կարեւորութիւնը ու պէտքը, կը հրահան-
գէ բոլոր մասնաճիւղերը որ յառաջիկայ երկու ա-
միսներու ընթացքին սարքեն մասնաւոր ձեռնարկ-
ներ սոյն նպատակին համար, մէջտեղ բերելու բա-
րոյական եւ նիւթական արդիւնքներ: Այս առթիւ
կը տեղեկացնենք ձեզ թէ պիտի ջանանք կարելի ա-
մէն միջոցներով մեր լաւագոյնը ընել որպէս զի կա-
րող ըլլանք փոխադրելու մեծ թիւով հայրենակից-
ներ Նոր Մալթիոյ:

Նոյնպէս Պատգմ. Ժողովը որոշեց համայն Մա-
լթիացիներու մարդահամարը պատրաստել: Մաս-
նաճիւղեր մասնաւոր ջանք թափելու են ընթացք

տալու ու տեղեկացնելու մեզ չուտով բոլոր Մալթի-
թիացի հայրենակիցներու անունները, ուր որ ալ
կը գտնուին անոնք: Այս ընելու համար հետեւեալ
կէտերը կը յանձնենք ձեր ուշադրութեան: Հայրե-
նակիցներու անունին եւ մականունին հետ միատեղ
տեղեկացնելու էք մեզ ո՞ր քաղաքը եւ ո՞ր երկիրը
բնակիլը, արհեստը, տարիքը եւ ո՞րչափ ժամանա-
կէ ի վեր հոն հաստատուելը: Այն վայրերը ուր
մասնաճիւղեր գոյութիւն չունին, անհատ Մալթի-
թիացիներ թող բարեհաճութիւնն ունենան սոյն
գործը կատարելու:

**ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅԻՂԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ
ԵՒ ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՔԵՄԱԲԵՅՆ**

31-րդ Պատգմ. Ժողովը Ընկերութեան շահե-
րու տեսակէտէն անհրաժեշտ նկատեց որոշում մը
անցնել նոր մասնաճիւղեր հաստատելու ու անդա-
մադրութեան քէմբէյն մը բանալու: Ու այդ որո-
շումին գործադրութեան եղանակը ձգելով Կեդր.
Վարչութիւնն, յարմարագոյն կը նկատենք որ բո-
լոր Մալթիացիներ մասնաւոր ջանք մը թափեն
նոր անդամներ արձանագրելու: Բոլոր Մալթիա-
ցի հայրենակիցներ պարտաւոր դալու են Կրթա-
սիրացի շուրջ բոլորուելու ու գործելու ու այդ կեր-
պով օգտակար հանդիսանալու Կրթասիրացի նման
հայրենաճիւղ ընկերութեան մը: Փառք ու պատիւ
համարելու են անոնք որ իրենց բաժինը կը բերեն
Նոր Մալթիոյ վերաշինութեան ու զարգացման:
Այն վայրերը ուր մասնաճիւղեր գոյութիւն չունին,
անհատ հայրենակիցներու նախաձեռնութեամբ կադ-
մբելու են նոր մասնաճիւղեր: Կրթասիրացի երախ-
տադիտութեամբ պիտի յիշատակէ անոնց անուն-
ները եւ գոհունակութեամբ պիտի ողջունէ սոյն
հայրենասիրական ազնիւ գործը: Այս առթիւ նոր
մասնաճիւղեր հաստատելու ու անդամադրութեան
քէմբէյի մէջ առաջնութիւն շահող մասնաճիւղեր
մասնաւոր նուէրով մը պիտի վարձատրուին Կեդր.
Վարչութեան կողմէ մեր յաջորդ Պատգմ. Ժողովի
մէջ: Նուէրը դադանի պիտի մնայ: Սոյն մրցումը
վստահ ենք որ օգտակար կերպով նոր խանդավա-
ռութիւն մը պիտի ստեղծէ Կրթասիրացի շուրջ: Ու
ամէն անոնք, որոնք որոշ եւ մասնաւոր կերպով ի-
րենց օժանդակութիւնը կը բերեն Ընկերութեան
զանազան ձեռնարկներուն մէջ՝ պիտի արժանանան
մասնաւոր գնահատանքի ու ընդհակադրութեան:

ԱՆԴԱՄԱՏՈՒՐՔԵՐՈՒ ԳԱՆՁՈՒՄ

Անդամատուրքերու գանձումը կը նկատենք
խիստ կարեւոր: Լաւ դիտէք որ ցարդ այս խընդ-
րոյ շուրջ գրեթէ բոլոր մասնաճիւղեր կը գտնուին
անհող ու թերի: Պէտք չէ սպասել մինչեւ տարուան
շրջանի վերջաւորութեան գանձելու անգամատուր-
քերը:

Աւելի դիւրին պիտի ըլլայ եթէ մասնաճիւղե-
րու վարչութիւններ, հաւաքիչներու միջոցաւ, քիչ
մը նեղութիւն յանձն առնելով աշխատին առ նուազ
երեք ամիսն անգամ մը գանձել զանոնք: Սոյն հրա-
հանգի գործադրութիւնը կը նկատենք անհրաժեշտ:

այն պատճառաւ որ Կեդր. Վարչութիւնն առանց
մասնաճիւղերու ընծայած օգնութեան կարող պիտի
չըլլայ գործնական արդիւնքներ ձեռք բերել:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼ ՀԱՇԻՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

31-րդ Պատգմ. Ժողովի մէջ տրուեցաւ Հաշուե-
քննիչ Յանձնախումբի վերջնական տեղեկատուու-
թիւնը: Յանձնախումբի անդամներէն Պրն. Ռուբէն
Պարմազեան լայնօրէն եւ մանրամասն կերպով պար-
զարանեց Ընկերութեան 1918-1932 հաշիւներու
տեղեկագրութիւնը որ քննուած էր վկայեալ հաշուա-
կաններու կողմէ եւ որ իբր արդիւնք տեսնուեցաւ
որ այդ շրջանին Ընկերութեան հաշիւները եղած
են ճշգրիտ ու ուղիղ: Նախկին Կեդր. Վարչութեան
անդամներէն Պրն. Ա. Աղմէլեան եւ Խոսրով Պօնա-
փարթեան իրենց պաշտօնավարութեան շրջանին կա-
տարած են իրենց գործերը անհաճախելի եւ ան-
թերի կերպով: Ուստի զեղծում տեղի ունեցած չէ:
Անոնց դէմ բոլոր քննադատութիւնները կը կրեն
անհատական եւ հատուածական բնոյթ եւ արդիւնք
են փոքրոգի նկատումներու:

31-րդ Պատգմ. Ժողովը որոշ մասնաւոր բանա-
ձեւով մը գնահատեց Պրն. Ա. Աղմէլեանի, Պրն.
Խ. Պօնափարթեանի ու Նաեւ Պրն. Մկրտիչ Ասլան-
եանի, Երեւան, մատուցած ծառայութիւնները, ո-
րոնք նիւթական եւ բարոյական մեծ գոհողութիւն-
ներով օգտակար հանդիսացած էին Կրթասիրացի
հետապնդած բարի նպատակներուն: Այս առթիւ

Պատգմ. Ժողովը նկատի առնելով Հաշուեքննիչ
Յանձնախումբի անդամներէն Պրն. Ա. Քեքելեանի
թերացումը իր պարտականութեան մէջ հաշիւնե-
րու քննութեան մասին ու իր անտեղի քննադատու-
թիւնները ու մամուլի մէջ գրած անհիմն ու անար-
դար գրութիւնները, պատգամաւորներու միաձայն
հաւանութեամբ դուրս արտաքսեց զինքը Ընկերու-
թեան շարքերէն:

Այսպէս Ընկերութեան հաշիւներու հարցը
վերջնականապէս փակուած կը համարենք, քանի
որ պաշտօնական եւ պատասխանատու, վկայեալ
հաշուաւարներ անկողմնակալ կերպով գտած են շի-
տակ եւ անթերի: Կը հրահանգենք բոլոր մասնա-
ճիւղերու եւ համայն հայրենակիցներու որ բնաւ
կարեւորութիւն եւ հաւատք չընծայեն այդ ուղղու-
թեամբ գրուած գրութիւններու ու խօսուածներու:

ԿԵՂՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Մասնաճիւղերո՞ւ ու անհատներու ուշադրու-
թեան կը յանձնենք Կեդր. Վարչութեան P. O. Box-ի
փոփոխութիւնը: Ասկէ յետոյ ձեր թղթակցութիւն-
ները գրելու էք հետեւեալ հասցէին:—

EDUCATIONAL SOCIETY OF MALATIA
P. O. Box 1705, Station D.
Cleveland, Ohio

Հայրենակցական ջերմ բարեկներով
ԵՐԵՎԱՆԻ ՊՅՈՑ ԿԵՂՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



975 32



21.06.2013

14503